ՔԱՂՎԱԾՔ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ 17.05.2019թ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

17.05.19թ. Ազգային փոքրամասնությունների կրթամշակութային կենտրոնում (հասցե՝ Սարյան 22, 15-րդ հարկ) տեղի ունեցավ Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի առաջին նիստը:

Խորհրդի կազմի 22 անդամներից նիստին ներկա էին 21 անդամները՝ Ի.Գասպարյան, Ա.Միխայլով, Ի.Պողոսյան, Գ.Գավրիլովիչ, Մ. Լազարևա, Մ.Գալստյան, Ս.Նամչևաձե, Է.Ցոմայա, Վ.Վայներ, Ռ.Վարժապետյան, Ս.Սուլթանյան, Խ.Հաջոյան, Կ.Հասանով, Վ.Ամիրյան, Վ.Վուխրեր, Մ.Մինասյան, Լ.Հարությունյան, Ջ.Դոմբայան, Յ.Յակովենկո, Ա.Հարությունյան, Աննա Հարությունյան:

Նիստից բացակայում էր Սերգեյ Ռաչկոն:

Օրակարգում դրված հարցերն էին.

1. Ծանոթացում Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամների հետ.
2. Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի աշխատակարգի հաստատում.
3. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ազգային փոքրամասնությունների համար նախատեսված 20,0 մլն դրամի բաշխման կարգի քննարկում և հաստատում.
4. Ազգային փոքրամասնությունները ՀՀ-ում, հիմնախնդիրների քննարկում:

Օրակարգի 1-ին հարցի համաձայն Խորհրդի անդամները ներկայացան՝ նշելով կազմակերպությունների անվանումները և այն համայնքը, որը ներկայացնում են Խորհրդում:

Օրակարգի 2-րդ հարցի համաձայն քննարկվեց և միաձայն հաստատվեց Խորհրդի աշխատակարգը:

Օրակարգի 3-րդ հարցի համաձայն կայացվեց 2 որոշում.

1. Պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին հատկացված 20 մլն.դրամից 8.998.000 դրամը հավասարապես բաշխել Խորհրդում 11 ազգային փոքրամասնությունների համայնքների միջև, իսկ 1մլն. 2 հազար դրամը փոխանցել կազմակերպություններից մեկին, այն է. «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ-ին՝ Խորհրդի անդամ կազմակերպությունների միասնական միջոցառումների իրականացման համար:
2. ՀՀ բյուջեով ազգային փոքրամասնություններին որպես աջակցություն հատկացված 20 մլն դրամի մնացյալ 10մլն. դրամը բաշխել համաձայն ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների կողմից (նաև՝ խորհրդի անդամ չհանդիսացող) նախապես ներկայացված և Խորհրդում հաստատված ազգային մշակույթի զարգացմանը, լեզվի և ինքնության պահպանմանը, ինչպես նաև նրանց իրազեկվածության բարձրացմանն ուղված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի՝ առավելություն տալով պետականություն չունեցող (եզդիական, ասորական, քրդական) համայնքները ներկայացնող կազմակերպություն-ների ծրագրերին, երբ ներկայացված կլինեն հիշյալ ծրագրերը: Այդ նպատակով նշանակվեց արտահերթ նիստի օրն ու ժամը, այն է՝ մայիսի 22-ը, ժամը 15:00-ը:

Օրակարգի 4-րդ հարցի համաձայն Խորհրդի անդամներին հնարավորություն տրվեց ներկայացնել իրենց հիմնախնդիրները:

Խորհրդի նախագահ Ա. Գասպարյանը՝ ամփոփելով քննարկումը, առաջարկեց Խորհրդի բոլոր անդամներին.

1. Գրավոր տեսքով Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնին տրամադրել համայնքներին հուզող հիմնախնդիրները,

2. Վարչապետի կամ Խորհրդի նախագահի անունով գրություն պատրաստել՝ առաջարկելով ստեղծել Ազգությունների կամ Բարեկամության Տուն (կամ այլ անուն) կոչվող մի միասնական ընդհանուր տարածք, որտեղ ՀՀ ազգային փոքրամասնությունները (և այլ էթնիկ խմբերը) կունենան իրենց գործունեության համար անհրաժեշտ տարածքն ու նվազագույն պայմանները

(գրասենյակ, խմբագրություն, խոհանոց, դասասենյակներ, դահլիճ, ընդունելության սրահ և այլն):

Նիստի նախագահող՝ Սրսեն Գասպարյան

Քարտուղար՝ Նարինե Գույլյան

20.05.19թ.